

ՎԵՂԱՐԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 28-ին, Վեհափառ Հայրապետի հատուկ կարգադրությամբ, Հայրենիքի տարբեր եկեղեցիներում երկարամյա քահանայական արդյունավոր գործունեություն ծավալած Տ. Արամ ավագ քահանա Բոյաջյանին, կնոջ մահվանից հետո, տրվեց վեղար կրելու իրավունք և ընդգրկվեց Մայր Աթոռի միաբանության շարքերը որպես կուսակրոն քահանա:

Արամ աբեղա Բոյաջյանը ծնվել է Կահիրեում, 1928 թ. դեկտեմբերի 30-ին: 1946 թ. ավարտել է տեղի Գալստյան ազգային վարժարանի միջնակարգ դասընթացը, միաժամանակ փոքր հասակից ծառայել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

1947 թ. տեղափոխվել է Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Լենինական քաղաքում: Այդ թվականից մինչև 1953 թ. աշխատել է Լենինականի տեքստիլ գործարանում:

1953—55 թթ. ուսանել է տեղի թեթև արդյունաբերության գործվածքեղենի մասնաճյուղի ուսումնարանում և ավարտել այն: Այդ ընթացքում շարունակել է իր ծառայությունները Լենինականի Ս. Յոթ վերք եկեղեցում որպես դպիր:

1955 թ. հունիսի 26-ին, հիշյալ եկեղեցու հավատացյալների խնդրանքի ու դիմումի հիման վրա, ձեռնադրվել է քահանա, ձեռամբ հանգուցյալ Տ. Վահան արքեպս.

Կոստանյանի, վերանվանվելով Տ. Արամ քահանա:

1957 և 1965 թթ. Վեհափառ Հայրապետի կողմից նրան շնորհվում է լանջախաչ և ծաղկյա փիլոն կրելու իրավունք:

1973 թ. Տ. Արամ քահանային Վեհափառ Հայրապետը շնորհում է ավագության պատիվ:

Տ. Արամ քահանան Լենինականի վերոհիշյալ եկեղեցում պաշտոնավարել է 26 երկար տարիներ: Իր ծառայությանը զուգընթաց 22 տարիներ անդուլ կերպով ղեկավարել է հիշյալ եկեղեցու քառաձայն երկսեռ երգչախումբը:

1981 թ. սկզբից, Վեհափառ Հայրապետի գիտությամբ և բարձր կարգադրությամբ, տեղափոխվել է Երևան և իր ծառայությունը շարունակել Ս. Զորավոր եկեղեցում՝ որպես ավագերեց ու լուսարարապետ:

Սույն թվականի փետրվարի 28-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ստացավ վեղար կրելու իրավունք: Հավարտ առավոտյան ժամերգության, Հուսիկ արքեպս. Սանթուրյանի առաջնորդությամբ, Տ. Արամ աբեղան ներկայացավ Վեհափառ Հայրապետին և ստացավ Նորին Սրբության Հայրապետական օրհնությունը: Այս առթիվ, ինչպես նաև նկատի ունենալով նրա երկարամյա ծառայությունը, Վեհափառ Հայրապետը Տ. Արամ աբեղային շնորհեց վարդապետական լանջախաչ կրելու իրավունք: